


ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐԱՌՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պրոպրիետարով Մեր ատանում ենք սև
փական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՏԱԳՐԱՏԱՆԸ (Բաղնիկայա և Բաղնիկայա փողոցների անկյունում) Թամազիայի տանը:

Կայտարարվում է թիֆլիսի «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևյալ հասցեով. ТИФЛИСТЬ. Редакция газеты «МШАКЪ», իսկ արտատպանքը. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրկնապատկան թշուառութիւն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լէօն Գամբետայի արձանը. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳՐԱՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զորս տարի Շալվէթ Խմբակ-վում չըջադարձեան արդիւնքից:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՆԱՊԱՏԱԿԱՆ ԹՇՈՒՆՈՒԹԻՒՆ

Երկու ամիս է արդէն, որ սարսափելի անձրևները, կարկուտը և չը տեսնված հեղեղները աւերածոյններ են դրոշմում Անդրկովկասի դանազան կողմերում, քարեքանդ անկող ազգաբնակչութեան աշխատանքի արդիւնքը, ոչնչացնելով ցանր-սերը, այգիները և աւերելով պտուղներ, ծառապարհներ, կամուրջներ, և անպակն դռներ տանելով ոչ թէ միայն անասուններից, այլ և մարդկերանցից:

Բնութեան հասցրած այս արտասովոր վնասները թշուառութեան մասին մենք չունենք մեր

ձեռքի տակ ձեռք, ստատիստիկական տեղեկութիւններ, քանի որ այդ տեղեկութիւնները ոչ ոք ոչ հաւաքել է և ոչ էլ կարող էր հաւաքել. կառավարութեան օրդանները այդպիսի գործերով չեն զբաղվում և չեն էլ կարող զբաղվել. իսկ ուրիշ տեսակի մասնաւոր խմբեր և հաստատութիւններ չունենք, որոնց նպատակը լինէր հետեւել մեր երկրի ազգաբնակչութեան մէջ տեղի ունեցող այդպիսի երեւոյթների ուսումնասիրութեանը: Բայց, հիմնվելով Նոյն իսկ ամիս կողմերից եկած լուրերի վրա, հիմնվելով մեր ժողովուրդի կենցաղավարութեան եղանակի վրա, և աչքի առջև ունենալով այն տարածութիւնը, որը ողողելիս յորդաններով և կատարի գետերով, դժուար է եզրակացնել, որ այդ վնասները ոչ հարկւններով և ոչ էլ Նոյն իսկ հազարներով պէտք է հաշուել. վնասները հարկւր հազարներով կարելի է հաշուել, և դարձանալի չէ ուրեմն, թէ ինչու այս երկու ամիսայ ընթացքում երկրի ազգաբնակչութիւնը ընկաւ վերին աստիճանի յուսահատութեան մէջ, և դեռ երկար ժամանակ կողքաց իր թշուառ և անօգնական վիճակով:

Հեղեղները ինչպիսիք հաղորդակցութեան ծառայարհները, անձրևը և կարկուտը ոչնչացրին գիւղացու հունձը, զրկելով նրան իր տարվայ հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՈՐՍ ՏԱՐԻ ՇԱՎՇԵԹ-ԻՄԵՐԻՎՈՒՄ ՇԻՏԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆԻՔԻՅԸ

Սալվէլից և Շալվէլից յետոյ սուսալ բերելը Որբօրակերտ դիւրը, որովհետեւ Աշխարհի դաշտը դնացող և իսլամութիւն ընդունող Սալվէլի Աթո-բէղին, կամ, ըստ յիշատակագրութեան, Բուխարայի պարսկին ժամանակակից է դառնում աւանդութիւնը և Որբօրակերտի Զօրթանայ բէգին, որը Նոյնպէս և Աթաբէգեան ցեղից լինելով միանգամայն և նա ներկայանում է Աշխարհի դաշտ Սալվէլի իշխանի հետ միասին և ընդունում է իսլամը: Այժմ Որբօրակերտում բնակվում են 141 տուն հայ-լուսաւորականներ. ունեն երկու և կեղեցի և երկու քահանայ: Եկեղեցու մինը նորադէս է և հոյակապ, իսկ միւրը հին և փոքրիկ: Այս հին եկեղեցին կոչվում է Աթաբէգեանց եկեղեցի, որի վրա կայ արձանագրութիւն վրաց հին եկեղեցական տառերով: Աթաբէգեանց սերունդից Հիսաբէգին, որը Որբօրակերտի բնիկ է, ինչպէս ինքն պատմում է, ծախել է Կ. Պոլսում Աստուրայի դեսպանատան վրա այս եկեղեցուն պատանդող ձեռագիր արձանագրատ մազադարձեայ աւետարանը և մի արձանագրութիւն, որի վրա, իր ասելով, փորագրված է

Յից և ընտանիքի ապրուստից. կատարած հեղեղները քարեքանդ արեցին խրճիթները իրանց ալիքներին հետ տանելով խեղճ գիւղականի տան պիտոյը: Ներք, իսկ սարերի լանջերից և արօտատեղիներից հոսող հեղեղներից զուր գնացին գիւղացու ապրանքները, եղներ, կովեր և ոչնչացրին հօտեր, զրկելով ժողովրդին ապրուստի վերջին յոյսից... Այդ բոլորի հետ համարեա ամբողջ երկու ամիս չը դադարեցին կատարի կայծակները և որոտոտները, որոնց թնդիւնը լսելիս, մեր տգէտ ժողովուրդը սարսափահար եղած և երկեղած սրտով, ձեռքերը ծոցին դրած, միայն այս էր կարողանում մրմնջալ. «Տէր Աստուած, մեր մեղքերի համար ես մեղայտեա պատժում. այս մեր մեղքերի պատիժն է»:

Այդպէս էր բացատրում ամեն տեղ ժողովուրդը բնութիւնից իրան համարող վնասները, սնդելով որ Աստուած բարկացել է, և այն էլ այն պատճառով, որ մարդիկ վատացել են, եկեղեցի չեն դնում, պատ չեն պահում, և երկեղած չեն: Այդ երկու ամիսների ընթացքում ոչ թէ միայն գիւղերում, այլ և շատ քաղաքներում ժողովուրդը միմյանց վրա պատարաւներ մատուցեց, մատաղ արեց, թափօր կատարեց, և դանազան սուրբերի մէջ պատեցնելով դաշտերում և անդաւաճաններում, թողութիւն և ողորմութիւն էր խնդրում: Առանց յուշումների չէր կարելի կարգալ «Մշակ» մէջ Շուշուց անցեալ ամիսն դրած մի թղթակցութիւն, որի մէջ ի միջի այլոց թղթակցին ասում էր. «Այսօր այստեղ թափօր կատարվեց. առաջնորդը, ամբողջ հողերսկաններով շրջապատված, ժողովրդի հետ միասին, հրապարակի վրա, ցեխի մէջ չըջած, յորդաւառ անձրևի տակ՝ ողորմութիւն են հայցում...» Այս այդ է միայն միջոցը, որով մեր տգէտ ժողովուրդը ուզում է դիմադրել հեղեղներին և բնութեան հասցրած վնասներին:

Եւ դա թշուառութեան կրկնապատկան տեսակն է, ժողովուրդը ոչ թէ միայն չը գիտէ, թէ ինչ պէտք է ունէ ձմեռը, ոչ թէ միայն չը գիտէ թէ ինչ միջոցներով կարող է վերականգնել իր վնասները, այլ և վերին աստիճանի յուսահատութեան մէջ ճնշվում է, թէ ինչ կը լինի իր դրութիւնը, եթէ այդ Աստուած այնչեպ պատիժ մի եր-

կու տարի միմեանց վրա կը կրկնվի: Այդ տգէտ ժողովուրդը ոչ թէ միայն չունի հասարակական շտեմարանն և, որտեղից կարելի լինէր այնպիսի տարիներում ցորեն վերցնելը, ոչ թէ միայն չունի հայնպիսի հիմնարկութիւններից, որտեղից կարելի լինէր փող վերցնել, վաշխառու աղայի ձեռքը չընկնելու և 100% տոկոս չը վճարելու համար, ոչ թէ միայն չունի որ և է միջոց կուսելու բնութեան սղատահարների դէմ, այլ Նոյն իսկ չը գիտէ և այն, որ քաղաքակրթութիւնը տուել է մարդուն միջոցներ՝ այդպիսի թշուառութիւններին դիմադրելու համար, չը գիտէ, որ մի տարի հունձը ինչպե՞ս ժամանակ կարելի է ստանալ չը լինել, չը գիտէ, որ կան միջոցներ՝ վաշխառուներից ազատ լինելու համար, չը գիտէ, որ կարելի է կուսել Նոյն իսկ անձրևները, հեղեղները դէմ, չը գիտէ, որ գիտութիւնը տուել է մարդուն «կարկուտաբէ» Նոյն իսկ կարկուտի դէմ կուսելու համար, չը գիտէ և այն, որ հունձը, տուել, արտը և ապրանքը Նոյնպէս կարելի է ապահովացնել հեղեղից, կարկուտից և անձրևից, ինչպէս այսօր քաղաքացին է ապահովացնում իր տունը և կայքը արհեստական կրակից...:

Այս, մեր ժողովուրդը ոչ թէ միայն միջոց չունի այդ բոլորը անելու, ոչ թէ միայն չէ օգտվում քաղաքակրթութեան Նորհաճ միջոցներից, այլ և Նոյն իսկ դադարաւոր չունի այդ բոլորի մասին, հասկացողութիւն չունի այդ բոլորի վրա, և երբ կարկուտ մի քանի րոպէում ոչնչացնում է նրա հունձը, երբ հեղեղը մի քանի ժամանակ խլում է նրա աշխատանքի պտուղը և բարեկեցութեան բոլոր աղբիւրները, նա գլուխը ծռած, ձեռքերը ծոցին, իր ամբողջ ընտանիքի հետ միասին խոնարհվում է և քաղցի, և մեղկութեան և ցրտի առաջ, համարելով այդ բոլորը անխուսափելի և անդիմադրելի...:

Դա, կրկնում ենք, թշուառութեան կրկնապատկան տեսակն է, դա մի հրէշաւոր թշուառութիւն է, որին ոչ ոք և ոչինչ չէ կարող դիմանալ:

Եւ մենք ամենքս վկայ ենք թէ ինչպէս այդ անխուսափելի տղիտութիւնը, որ կուրացել է ժողովրդի միտքը և աչքը, ամեն մի քայլափոխում աւելի էլ անտանելի է դարձնում նրա վիճակը,

դակագործված է Աշոտ կիւրապաղատի արձանը, հաւանականաբար դատելով: Արձանը քարի վրա դուրս է բերված ձուռնակ երեսով, կարճ մորուքաւոր, հաստամարմին և միջահասակ անձն: Կանգնած է ոտքի վրա, երեսը դէպի խորան, ճակատին պսակ բոլորած, գլխաբաց, առջև դրած եկեղեցու իսկական ձևը, որը ցոյց է տալիս իր մատով: Սրա երկայն կալալի նման հաջուստի վրայից մէջքի վրա կապած է գօտի, որից առիւնը կախված է մի լայն սուր, իսկ կալալի վրա յից առանց թիկերը հագնելու ուսին առած է բարձր օձիքաւոր մի վերապաշտ, որի զրանքները իրար վրա ծալված են եկած: Գիւղի թուրքերը ասում են, թէ եկեղեցին չինոյ աղաւթու պատկերն է: Թայտնի է որ Աշոտ կիւրապաղատը ապրում էր IX դարում և եկեղեցին եւ այդ դարի արտադրութիւն է: Եկեղեցու պատերի վրա շատ տեղ կան արձանագրութիւններ վրաց հին եկեղեցական տառերով, որոնց մէջ շատ տուներ նման են հայոց մենապեան հին տառերին: Եկեղեցու առջև կանգնած է դանդաղատու, որի վրա եւ արձանագրութեամբ լեցուն է: Եկեղեցու կողքին եղել են կոթողներ, որոնց միայն վերի մասն է մնացել: Ինձ հանդիպեց Շալվէթի ազնաւորներից մինի տանը թուրքերէն մի վճառգիր, որը գրված էր սրանից 236 տարի առաջ և վերաբերվում է այս եկեղեցու կառուածքին, որի թարգմանութիւնը այս է: «Շալվէթի տանգաղի Տրէթ գիւղի բնակիչներից Տրէթարի քահանայ Գեղեան քահանան ներկայացաւ Հայրաթիւն ատենանին և Նոյն սանջաղի «միրի լիւս» Ապան բէկի քեջաւորաց (տնտես) Շահին աղայի դէմ բողոքեց, թէ Նոյն

կրկնապատկուած է նրա կրած հարուածները: Ճըշ մարիտ է, շատ էլ հեշտ բան չէ անտեսական յեղափոխութիւններ առաջ բերել մի ժողովրդի կեանքի մէջ, և ոչ էլ շատ հեշտ է միանգամից պատուաւոր մի ժողովրդի կեանքին այն բոլոր միջոցները, որոնցով քաղաքակրթութիւնը կըրտուած է բնութեան դէմ, և այլն և այլն, բայց մի-թէ մեր ժողովուրդը, մինչև այժմ զրկւած լինելով այդ բոլորից, պէտք ճնշվել տղիտութեան ու վնասաբեր նախապաշարմունքների տակ, այն ժողովուրդը, որի համար ասում են, թէ ունի մոտաւոր կեանք, ունի մոտաւոր զեկավարներ...

Ապա ուրեմն ինչի մէջն է կայանում այդ մոտաւոր կեանքը, այդ մոտաւոր վերածնութիւնը, — կը հարցնեն շատերը, երբ այսօր ժողովուրդը, ամբողջ նոյն դրութեան մէջն է, ինչի մէջ որ գտնվում էր շատ ժամանակ առաջ:

Ահա հարց, որի մասին պարտաւոր են մտածել նրանք, որոնք ժողովրդի մոտաւոր զեկավարներ են համարվում, և որոնք, այդ խնդր ժողովրդին մոտաւորագծով, — ժողովուրդը, որից նրանք դալինայ պըսակներ են սպասում, — դալված են միմիայն հայհոյելով ու խեղդատակութիւններ անելով...

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿՆԵՐ

Յուլիսի 15-ին, ինչպէս մեզ գրում են, ԿՈՋՕ-ՐՈՒՄՆ էլ կատարվեց Ռուսաստանի միլիտարական 900-ամեայ տարեգարծի տօնախմբութիւնը: Ռուս հոգևորականութիւնը, տեղական վարչութեան ներկայացուցիչների, աւանապետի և բաղմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, Կոջօրի ուսանաց եկեղեցուց, որտեղ պատարագ կատարվեց, ուղևորվեց դէպի Ռեձօ, որտեղ օրհնեց աղբիւրի ջուրը: Ժամերգութիւնից յետոյ քահանան երկար ճառ ասեց, որի մէջ բացատրեց Ս. Վլադիմիր թագաւորի պատմական անձնաւորութեան նշանակութիւնը: Տօնախմբութիւնը վերջացաւ «Коль славы Богъ» և «Вожо Царя Храпи» օրհներգերով, որոնց երգեց կազակների խումբը, զինուորական օրկեստրի դաշնակցութեամբ:

Ինչպէս մեզ գրում են, Սուրմալուի գաւառի Արարատեան դաշտի հացահատիկները թէ՛ և ըսկզբում շատ առատ հունձ էին խոտանում, սակայն այժմ, գիւղացիների ասելով, յոյսերը չարացան, յորդառատ անձրևներից յետոյ սկսած սաստիկ չորերի պատճառով փոփոխական եղանակը փչացրեց հունձը և արգելք եղաւ հացի հասկերի աճելուն ու հատահանալուն: Բայց և այնպէս լեռնային անջրդի արտերը շատ առատ հունձ են խոտանում:

Մեզ գրում են ԻԳՐԻՐԻՅ, որ Սուրմալուի գաւառում այս տարվայ յոշին ամսվայ ընթացքում

«Լիլայի» հողերում Սիրաբն և Սինքօտ գիւղերում փեթեթաւով, Արապաւով և Էֆգաւով առաւար բաղերս, որոնց սահմանները ժողովրդին յայտնի են, այս Դահէն աղան բունի յափշտակեց ձեռքիցս:

«Դահէն աղային հարցրինք, պատասխանեց, որ այդ հողերը հնուց սուլթանի մուրհակով Ալան բէկի սեփականութիւններն են, նա մինչև այսօր դրանց տիրած է և ոչ ոք էլ դեռ ևս արգելք չէ եղած: Սրա համար դատախազ Գեղեղն քահանայից անի ստուգութիւն, վկայ պահանջելիք, բայց որովհետև նա վկայ չը կարողացաւ բերել, ուրեմն Դահէն աղային երդում ընկաւ. «սա յանուն Ամինաբարձրեւոյն Աստուծոյ երդուեց, թէ այն բաղերին եկեղեցու կողմից կամ մի ուրիշից մինչև այժմ ոչ ոք արգելք չէ դարձել և ոչ էլ տիրել, որով և իր սեփականութիւն լինելը կատարեալ հաստատեց և տիրեց, ուստի յիշեալ Գեղեղն քահանային արգելեցինք, որ այլ ևս ոչինչ չը պահանջէ և այսպէս վճռելով «հիւջլէթս» յանձնեցինք Դահէն աղային»: Ասել հարկ չէ, որ այժմ Տըէթում ոչ քահանայ կայ և ոչ քրիստոնեայ, եկեղեցին մզկիթ է փոխարկված, սակայն կան դեռ ևս այն անուանով գիւղեր և կալուածներ:

III

Այժմ ամբողջ գաւառում, թէ Դալչէթ և թէ Խմբիլէ, զետեղված են 57 գիւղեր: Այս գիւղերից միայն երեքը հայերով են բնակեցրած, իսկ մնացածները ամբողջովին թուրքերով: Բացի Մամանլի գիւղից, որ կան և հայեր: Գաւառի ժողովրդի թիւը հասնում է մինչև 2,630 տան, 17,976 հոգի երկու սեռից, թէ հայ և թէ թուրք:

սպանված են 5 հոգի թուրքերից և քուրդերից և երկու այդպիսի էլ ծանր ու թիթեկ կերպով վիրաւորված են: Առհասարակ, ինչպէս երևում է, սպանութիւնները և վիրաւորումները շատ յաճախ են պատահում Սուրմալուի գաւառում: Բայց վիրաւորվեալ դէպքերից շատերը անյայտ են մնում, որովհետև շատ անգամ վիրաւորողը և վիրաւորվածը գործը իրանց մէջ հաշտութեամբ են վերջացնում, առանց տեղեկացնելու իշխանութեանը:

ՆՈՐ-ՐԱՅԱՋԼՏԻՑ մեզ գրում են: «Մեղանում վաճառվող կենսական պիտոյքների գները հետեւեալներն են. թխած հացի ֆունտը 3 կօպ., տաւարի մսի ֆունտը 4 1/2 կօպ., ոչխարինը 5 կօպ., հաւած իւղը 25—30 կօպ., 8 հատ ձու 5 կօպ., քրդի պանիրը լիտրը (12 ֆ) 65—70 կօպ., ալիւրի լիտրը 45 կօպ.: Այժմ Եօրագեալից են սկսել ցորեն բերել, որը բաւական թանգ է նստում: Այս տարի ցանքը շատ լաւ է, միայն արեւմուտքից փչող քամիները փոքր ինչ վնասեցին ցանքերին: Նշանակել չըք է և վաղուց է արդէն որ անձրև չէ գալիս: Առհասարակ ընկած է Պէտք է խոտով խմել որ ժողովուրդը մեծ նեղութեան մէջ է ալիւրի թանգութեան պատճառով»:

Ջանգեղուրի գաւառից մեզ գրում են, որ ամբողջ գաւառում կայ միայն երեք հատ ծխական հայաց դպրոց, որոնցից մինը Մեղրի գիւղում, միւսը Բունակով գիւղում, իսկ երրորդը Տաթիւն վանքում: Վերջինը շատ սակաւ աշակերտներ ունի և ամենաթշուառ դրութեան մէջ է: Միւս գիւղական հասարակութիւնները, թէպէտ ծխական դպրոցներ չունեն, բայց նրանք էլ սկսում են դպրոցի անհրաժեշտութիւնը դալ: Հարկաւոր են նախաձեռնութեան ոգի ունեցող մարդիկ, որոնք առաջնորդէին ժողովրդին իր գովելի դիտաւորութեան մէջ: Իսկ Բունակով գիւղի ծխական դպրոցին բարուաբանակ պ. Առաքել Դատուրեանց իւրաքանչիւր տարի նուիրում է 100-ական ռուբլի: Այժմ թղթակիցը լսել է, որ նոյն Առաքել Դատուրեանց դիտաւորութիւն ունի Գարահոնջ գիւղում հիմնվելի ծխական դպրոցին էլ տարեկան 150 ռուբլի նուիրել:

Յուլիսի 6-ից մեզ գրում են ԻԳՐԻՐԻՅ հետեւեալը: «Մի երկու շաբաթ շարունակ անտանելի և խեղդող չոր էր անում մեղանում: Այնուհետև երբ սկսեց հով քամի փչել, եղանակը փոխվեց և նշանաւոր կերպով մեղմացաւ: Այժմ թէ՛ և քամի այլ ևս չը կայ, և ցերեկը դարձեալ չոր է անում, բայց գիւղերը արդէն բաւական հով նոյն իսկ ցուրտ է լինում»:

Սուրմալուի գաւառում, ինչպէս մեզ հաղորդում են, կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքների գները հետեւեալներն են. հացի ֆունտը ար-

Րացի սրանից գաւառում մշտապէս թափառում են 200 հոգու չափ գնչուներ, որոնց տեղացիները «ղրիղիան բոչա» են անուանում: Սրանք ընդունած են իսլամութիւն, խօսում են թուրքերէն, բայց առհասարակ իրանց ընտանեկան լեզուն հայերէն են գործածում, որը աւելի մաքուր հայերէն է, քան թէ մեր գաւառականը: Գաւառի հայաբնակ գիւղերն են—Օրբօբակերտ—141 տուն հայ-լուսաւորչական, 377 հոգի արական, 331 իգական. Սաթիլէ, կամ Սաթիլէ-լաւաթ—65 տուն հայ-կաթօլիկ, 156 արական, 153 իգական, և 14 տուն հայ-լուսաւորչական, 48 արական, 37 իգական. Փիլիկիւր (Խմբիլէի բաժնում) 32 տուն հայ-կաթօլիկ, 63 արական, 76 իգական, և Մամանլէլիում, կամ Մամանլէլաւաթում 14 տուն հայ-կաթօլիկ, 47 արական 34 իգական: Ընդամենը գաւառում կան 155 տուն հայ-լուսաւորչականներ, 793 հոգի երկու սեռից, իսկ հայ-կաթօլիկներ 111 տուն, 529 հոգի երկու սեռից:

Օրբօբակերտ գիւղի հայերը իրանց աշխատանքը բնաւորութեամբ բաւական հարուստ են եղել: Իրանց հարստութեան ապացոյց կարող է լինել նրանց նոր կառուցած հոյակապ եկեղեցին, որի համար ոչ մի կողմից հանգանակութիւն չեն առել, սակայն մի կողմից թաւանք, որին այս ուսուցիչը պատկանում է յետոյ երեք անգամ եմթարկվել են Սլաւաթի, Մալախիցի և Զուրաբ-սուրբ լազերի ձեռքով, աղքատացրել է Օրբօբակերտի բնակիչներին: Երեք թաւանում Օրբօբակերտից կողոպտվել է մինչև մօտաւորապէս 12 հազար ռուբլի: Վերջին թաւանում, որը կա-

ծէ 3 կօպէկ, դարու խաւարը (30 պուր) արծէ 20—25 ռուբլի, ոչխարի մսի ֆունտը 6 կօպ., տաւարի մսի ֆունտը 5 կօպէկ, վերջապէս փոքրիկ ձուերը 10—15 կօպէկ հատը:

«Медицинская Бесѣда» շաբաթաթերթը հաղորդում է, որ Մօսկվայում բացվեցաւ նոր սպանդանոց, որի կառուցումը նստեց քաղաքին 2 միլիոն ռուբլի:

Պետերբուրգի բժշկական ակադէմիայի պրօֆէսոր Վ. Գրուբէր թողնում է Ռուսաստանը և դընում է Վիէննա: Նա ակադէմիամբ չէին էր և դասախօսում էր անատոմիայից:

Պրօֆէսոր Զրէկաուէր, ինչպէս հաղորդում է «Врачъ» շաբաթաթերթը, նուրբերգ Պետերբուրգի բժշկական ակադէմիային 6,000 ռուբլի, որի տուկոսով պէտք է ուսում ստանայ մի ուսանող յիշեալ ակադէմիայում:

Բոստոլից հեռագրում են «Արձագանքին». «Այս օրերս վախճանված հայ վաճառական Այլմանը կտակել է իր մայրնի քաղաքի տեխնիական դպրոցի օգտին երեք հազար ռուբլի»:

Լսում ենք, որ Ախալցխայի ուսումնարանի ուսուցիչներից մէկը, պ. Արշակ Կարապետեան, յօրինել է թեկ մանկու մի նոր գործիք: Գործիքը, ինչպէս ասում են, մեր գիւղերում այժմ գործածվողներից շատ առաւելութիւններ ունի, քանի որ մանուածք աւելի հեշտ ու լաւն է ստացվում. պ. Կարապետեան իր մէքենան ներկայացրել է մի քանի մասնագէտ անձերին:

«Արձագանքը» հաղորդում է, որ Թիֆլիսի հրատարակչական ընկերութիւնը այս օրերս յանձնել է մամուլին հայր Մահակեանի կազմած «Արաւան պատմութիւնը»: Այս լուրը կարօտ է ստուգութեան: Թիֆլիսի հրատարակչական ընկերութիւնը» ասելով մենք հասկանում ենք նրա վարչութիւնը և իմբագրական ժողովը, բայց ոչ մէկը և ոչ միւսը գրութիւն չունեն, քանի որ ընկերութեան անդամների պաշտօնավարութեան ժամանակամիջոցը վաղուց լրացել է և նոր ընտրութիւններ չեն եղել, ապա ո՞վ պէտք է յանձնէր մամուլին:

Ստացանք տ. Տէր-Մկրտչեանցից Հին-Նախիջևանում ժողոված 19 ռուբլի Բաֆֆիի անտիպմնացած կամ սպառված հեղինակութիւնների տըպագրութեան համար: Այդպիսով խմբագրութեան մէջ կայ նոյն նպատակով ժողոված առաջվայ 17 ռ. 21 կօպէկի հետ ընդամենը 36 ռ. 21 կ.: Իսկ Բաֆֆիի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու նպատակով խմբագրութիւն ժողոված է մինչև օրս 155 ռուբլի:

տարվել է հոշակաւոր աւազակների ձեռքով, որպիսիք են—Հուրաւ չուրուք-սուցի, Գաղիան-օղլի և դանդաղօցի Սարիմիշ-օղլի, զուրս են տարվել մօտ 10 հազար ռուբլու իրեր, միմիայն 3 հազար ռուբլու չափ թէ փող և թէ իրեր պատկանում է եղել Պապիկ Ղուճեանին: Այս թաւանում յիսուն հոգի լազեր կրում են եղել իրանց չալակին կողպատի ծանր բեռները և երեք ձի էր բարձած են տարել: Վերջապէս անցեալ տարվայ հրդեհը Օրբօբակերտին միւս կողմից զգալի կերպով հարուստ տուեց, այնպէս որ այլ ևս այնուհեմ նշանաւոր հարստութիւն չը մնաց: Այսու հանդերձ Օրբօբակերտը կարող է պահպանել մի կանօնաւոր կենտրոնական գիւղական դպրոց, որը անհրաժեշտ է հիմնել գաւառի համար: Ինչպէս մի քանի անգամ կրկնվել է, Աթաբէգեանց Ս. Յովհաննէս եկեղեցին տարեկան 7—800 հոգի ուսուսուորներ են դալիս, և առհասարակ լիւրիւրից, Արաւալաւքից և Արդահանից: Եթէ Օրբօբակերտի կրթութեամբ թուրք բարեկամակալ գործունէութիւն ցոյց տալ սկսէր, տարակոյտ չը կայ, որ այդ բարեկալաւ ուսուսուորները առաւտածեալութիւնը այնպիսի մի դպրոց պահպանելու համար հարկաւոր աղբիւրի մեծ մասը կարող էր համարվել:

Սաթիլէի համար վերև հարկ եղած տեղեկութիւնները հաղորդած լինելով, հիմա վերցնենք Փիլիկիւր: Փիլիկիւրից ասում են թէ Անիից դադարած ժողովուրդ են և, ընկնելով թէ նոքա գաւառում քանի անգամ իրանց համար բնակութեան վայր են հաստատել, յետոյ թողել անցել մի ու-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԵՕՆ ԳԱՄԲԵՏՍՅԱՆ ԱՐՁԱՆԸ

Յրանսին իր վերջին տարիների պատմութեան էջերում փառաւոր կերպով արձանագրել է իր հանձնարեղ որդիերանցից մէկի անունը, որին ճանաչում է ամբողջ հայրենիքը, և որի հըռչակին անձանօթ չէ ոչ թէ միայն ամբողջ Եւրօպան, այլ և ամբողջ աշխարհը: Դա Գամբէտեան է: Այրական հասակում զո՞հ դնացած այդ քաղաքական գործիչի և նշանաւոր հայրենասիրի անունը և գործերը դեռ այնքան թարմ են, նրա մահվան տպաւորութիւնը դեռ այնքան նոր է, որ մենք աւելորդ ենք համարում մի առ. մի յիշատակել նրա գործերը, որոնք անկասկած կենդանի են ամենքի յիշողութեան մէջ: Ամբողջ Յրանսին սիրեց Գամբէտեանին, նրա տաղանդի, նըրա եռանդի, նրա անձնաւորութեան և նրա արտասովոր քաղաքական անվերելի համար, և նրա անսպասելի մահը կայծակի հարուածի նման ներգործեց հայրենիքի վրա:

Եւրաստալէտ հայրենիքը շտապեց ի միջի այլ ցոյցերի մի արձան ևս կանգնեցնել Գամբէտեանի յիշատակին, և այդ արձանի բացումը տեղի ունեցաւ Փարիզում, յուլիսի 14-ին: Արձանի բացմանը ներկայ էր ահալին բաղմութիւն: Ներկայ էին հանրապետական կառավարութեան շատ ներկայացուցիչներ և մինիստր-նախագահ Ֆլօրէ Դաուիլը, որը արձանը ուղևորված ճառեր խօսեցին, որոնց մէջ գովաբանում էին ջերմ խօսքերով մեծ հայրենասիրի մեծ ծառայութիւնները, որ նա մատուցեց հայրենիքին թէ պատերազմի սարսափելի միջոցին և թէ խաղաղութեան ժամանակ: Մինիստր-նախագահը իր ազուռ ճառը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «հուրիներ մեր ոյծերը ժողովրդին, որին ծառայեց Գամբէտեան, զորքին, որին սիրում էր նա, հայրենիքին, որի ամենաարդի պաշտպանն էր նա, և վերջապէս հանրապետութեան, որի համար մենք ամենքս ցանկանում ենք, որ զնայ բարեկամաւոր լէֆօրմների շաւղով»: Ֆլօրէից յետոյ ճառ խօսեց սենատի նախագահ Բոլիէ, և մատնանիլ արեց այն անսովոր քաղաքական հեռատեսութեան և քաղաքական տակտի վրա, որով գործեց Գամբէտեան 1875—1877 թվականին, պաշտպանելով հանրապետութիւնը միապետականների դէմ, առանց ճնշումների դիմելու և առանց խախտելու գրութիւն ունեցող օրէնքները: Ուրիշ բաղմութիւն ճառախօսեց մէջ էր և Ֆրէյսիէ, որը իր ճառի մէջ կանգ առաւ զխաւորապէս Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Գամբէտեանի ցոյց տուած քաղաքականութիւնների վրա, և այն միտքը յայտնեց, որ նրա արտասովոր եռանդի և անձնութիւնը հնորով հայրենիքի պատիւը ոսնակոխ

թիւ տեղ, մի որ և է կատարածից ազատվում է նըրանց գաղթական լինելը: Սրան եղել են ամենից առաջ Վէլ գիւղի ձորում: Ընթերցաւ, այդուհից անցել են խմբիլէի մօտ, բնակվել են Նոյր-բարայում, Նոր-բարան էլ թողել անցել են այնտեղ մօտերը: Գալվաթ, Գալվաթից էլ իրանց այժման փոխիլիւր, այս պատճառով և սրան կոչվում են՝ բարեցի, զալվաթից, փոխիլիւրից: Փոխիլիւրը հիմնված է մի չոր քարափի վրա, որի երկու կողմից անօգուտ դետակներ են հոսում: Սրան չունէին ոչ վարելահող և ոչ պարտէզներ. 1884 թվին, երբ որ պ. Կամարական, նոր գաւառուի գիւղերը, տեսաւ դրանց թշուառ վիճակը, խղճաց և միջնորդելով բարձր կառավարութեան առջև, իրաւունք ստացաւ գաղթած թուրքերից մնացած հողերից որքան կարելի էր դրանց յատկացնել, որով ուսուրու հաց գտնելու չափ օգնութիւն ստացան:

Գաւառի իսլամները մեծ եռանդով են աշխատում իրանց կրօնական դպրոցները համար, բայց այն որ ամեն վիւղ իր իմանն ու «մեղքեալ» դպրոցն ունի, Սաթիլէում ևս մասնաւորապէս կարողում են մինչև 80 «մօլլա» կրօնական գիտութեան աշակերտներ: Սրան առհասարակ լիւրում են հասակաւոր երիտասարդներ: Սրանց այժման դաստառն է կաղի Հուսէյն էֆ. Խալաձէ, որը մեծ յարգանք է վայելում ամբողջ գաւառում:

(Կը շարունակվի)

չեղան փարիզի ընդդիմադրութիւնը այդ յիշատակութեան արժանի ժամանակամիջոցին հսկայական կերպարանք է ընդունում: Այսպէս սերունդը անկասկած արժանի էր յայտնի, որ ազգը կարող է մեծ լինել, եթէ նա կը կանգնի սպարաւորականութեան աստիճանի վրայ:

Աւելորդ է ասել, որ լէօն Գամբետտայի արձանի բացման միջոցին ամեն դասակարգի մարդիկ արտայայտեցին անսովոր ուղեորութիւն, թմբակահարութիւն հրապարակեց ամեն տեսակ ցոյցերով և ողերսութեամբ բացականչութիւններով:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 8 յուլիսի

Ազգ. խորհուրդ ատենապետն և «Արեւիկ» արդիւնքին գործադրութիւնն այն մեքենայութեանց, որոց չորսնիկ Ազգ. խորհուրդ պիտի դառնայ արդար Պատրիարքական ընտրութիւնը կատարելու համար: Տեղապահ Սիմօն եպիսկոպոսի գործն էր, միացած Բաղդադական խորհուրդ Ատենապետին Չորեքշաբթի օր «Արեւիկ» խառն պարտաւորեց այդ յանդուգն դիտարկութիւնը, ընտրութիւնը քառասունի մօտ երեսփոխանը և ասանց սպասելու անոնց ներկայութեան, Պատրիարքական ընտրութիւն կատարել անյարմար էր Չորեքշաբթի առաւօտուն Ազգ. խորհուրդ Ատենապետը, պ. Թրեքեան, տեսակցեցաւ Բաղդադական խորհուրդ Ատենապետին հետ և յայտարարեց բացարձակապէս, թէ՛ Ազգ. խորհուրդը ու ազգը չեն կարող խաղալիք լինել մի Սիմօն եպիսկոպոսի ձեռնաց մէջ: Նոյն օրը՝ Բաղդ. խորհուրդը նաև դատարեցաւ. տեսան թէ անկարելի է իրենց ուղեւոր ընել, հետևաբար յետաձգուեցաւ Ազգ. խորհուրդը դատարանին Յուլիս 11-ին, երկուշաբթի օր, Ազգ. խորհուրդը դեռան և Բաղդ. խորհուրդը միասին բանակցութիւն մը ընելէ յետոյ պիտի տնօրինէր կատարել Պատրիարքական ընտրութիւնը:

Ո՛վ պիտի լինի Պատրիարք Ամեն հայիկ խառն դարձած է, ամեն ինչ էլ մի կողմ դրած է. միայն Բաղդ. խորհուրդին համար աշխատութիւնները ջերմապէս կը լինին. բայց տակաւին ոչ մէկու համար կարելի է հաւանական կարծիք մը յայտնել: Առ այժմ այսպիսի կը տեսնուի թէ բոլոր հակաբաղդ. խորհուրդները կուզեն միասին ընդգծել Բաղդ. խորհուրդին, բայց յետոյ ճիշտ. համար քուէ տան, այդ վերջի խնդիր է կըսեն:

Իսկ Բաղդադական խորհուրդը, մասնաւոր Սիմօն պէյ, ջերմապէս Բաղդ. խորհուրդը կուզեն, ինչպէս նաև Նորաստիճանաւորն ու Տեղապահը: Երկու օր առաջ Բաղդադական խորհուրդը պատրաստեց ցուցակն այն հինգ եպիսկոպոսաց, որք քաղաքականապէս արժանաւոր են Պատրիարք լինելու. այդ ցուցակը կը ներկայացուի Ազգ. խորհուրդ, և թէպէտ Ազգ. խորհուրդը այդ ցուցակին դուրս ալ ընտրութիւն կընէ, սակայն ցուցակը ազդեցութիւն կընէ ընտրութիւնը վրայ: Այդ ցուցակին դուրս ձգուած են խորհուրդի չափի, խորհուրդի չափի և Նորաստիճանաւոր Գարեգին եպիսկոպոսները: Գուցակին դուրսն է Բաղդ. խորհուրդին եպիսկոպոսն, յետոյ կուզան Գերձական Արիստակէս (Կարինի հիմու առաջնորդը), Ալեքան խորհուրդ, Միսիրեան խորհուրդ (Երեսնայ առաջնորդը), Խալիլեան Վատիկան եպիսկոպոսները: Բայց այս ցուցակը վերջնական չը կրնար նկատուիլ, երկուշաբթի օր նոր խորհրդակցութիւններ պիտի լինին և հաւանաբար քաղաքականապէս այս ցուցակը Սիմօն պէյ յաջողութեամբ դուրս ձգել մասնաւորապէս խորհուրդ Նար-Պէյ եպիսկոպոսի անունը այդ ցուցակին, կուզէ հասկնել թէ պատրիարքական ընտրութիւնը չը պիտի վաւերացուի կայսեր կողմանէ, և այս եղանակաւ խորհուրդի կողմակցները մտքի մէջ կ'առնեն խորհուրդանէլ տալով ևս կեցնել տալ զանոնք Նար-Պէյ քուէ տալէ:

Առ այժմ այս մեքենայութեանց, վէճերու, պայքարներու մէջ ենք:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Լրագիրները հաղորդում են, որ Հոռոմի սպանել, իրան ճնշված զգալով խառնաշուռ, դիտարկութիւն ունի իր արժեքը տեղափոխել Աստուրիա: Աստուրիական կայսրից համաձայնութիւն ստանալուց յետոյ, պատր ևս կը գետնաշին Տիրու նահանգը:

— Կ. Պոլսի հայոց լրագիրներում կարդում ենք հետևեալը: «Ազգային պատրիարքարանի յանձնակա-

ցաւ ազգային հիւանդանոցի և ս. փրկչի եկեղեցու վերականգնութիւնը արտօնող կայսերական հրաժարանագրութիւնը կը լսենք թէ հիւանդանոցի հողաբարձութիւնը, որը կայսերական հրամանագրի երեսնու կը սպասէր, արդէն ամեն միջոց ձեռք առած է հին շէնքը մաս առ մաս վար առնելով, նորին կառուցման ձեռնարկելու համար:»

— Վիեննայի «Tageblatt» լրագրին հետագրում են Բերլինից, որ իբր թէ իշխան Բիսմարկ իրան աստիճան յղման է դրում և այդ պատճառով ցանկանում է միանգամայն թողնել պետական գործերը:

— «НОВОСТИ» լրագրին հետագրում են Բերլինից, որ հաստատ աղբիւրներից անած տեղեկութիւններից երևում է, որ քաղաքական արդի դրութիւնը այնտեղ միանգամայն պարզվել է:

— Վիեննայի «Neue Freie Presse» լրագիրը ասում է, որ Բոլզարիայի գործերը դրութիւնը շատ վատ է: Միսիրեանի մէջ երկպառակութիւն է տիրում: Ազգային ժողովը Ֆրեյդմանը իշխանի դէմ է: Երկրի դրամական միջոցները միանգամայն սպառվել են: Թիւրքիայի հետ այժման կառավարչները չորսուկ յարաբերութիւնները լարված են:

— «Figaro» լրագրի կարծիքով Ֆրանսիայում կատարած վերջին ընտրութիւնները ցոյց տուցին, որ բուլանժականութիւնը անդառնալի կերպով կործանվում է:

— Ռուսարական ընդդիմադրական կուսակցութեան պատկանող լրագիրները ասում են, որ Ռուսաստանի և Գերմանիայի կայսրերի տեսակցութիւնից յետոյ արևելքի գործերում փոփոխութիւն կը լինի ի պետ Աստուրիայի, մասնաւորապէս Բոլզարիական հարցում: Իսկ կիսապաշտօնական լրագիրները չեն հաւատում, որ վերոյիշեալ փոփոխութիւնները լինեն:

— Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների կառավարութիւնը մեծ դժուարութեան մէջ է: Նա չը գիտէ ինչ անէ իր պետական արդիւնքների հետ, որ տարուց տարի աւելանալով միանգամայն ծածկում են ծախսերը և մնում է անագին մնացորդ: Կառավարութիւնը ուղում է այդ մնացորդով ժամանակից առաջ շինել պետական պարտքի մի մասը, բայց Միացեալ-Նահանգների պարտքերը շատ ամուր են սպանում իրանց ձեռքում պետական թղթերը, քանի որ բոլորս յում նրանք ամենից քաւ գին ունեն: Ամերիկայի տնտեսագետները աշխատում են մի ելք գտնել կառավարութեան համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Լօնդոնի Վերսալ-Պալատի մէջ այս օրերս կայացաւ մի հրէշաւոր կօնցերս հուշակաւոր շէնքի երաժշտի յիշատակին կօնցերս տրված էր երեք օր շարունակ և կօնցերս այցելուները թիւը հասաւ 86,000 հոգու: Կօնցերսում մասնակցում էին տիկիները՝ Ալեքանի, Տրեքեյի և Նոր-Պէյի Օրկէստրը և խօր կառավարում էր յայտնի երաժիշտ Մանն: Օրկէստրը բաղկացած էր 471 հոգուց, իսկ խօրը 3,006 հոգուց, այնպէս որ կատարողների ամբողջ թիւը հասնում էր 3,500 հոգու:

Վիեննայի Մակարտ հուշակաւոր նկարչի այրին, որը առաջ թատրոնական պար եկող էր, այս օրերս առնանապաւ տատրիայի կուս Մարիալիցի հետ: Եւ ան պարելուց կընը, նախ հուշակաւոր նկարչի ամուսին, իսկ յետոյ կոմսէնի դարձաւ:

Բերլինի համալսարանի զանգեղանի միտում այս օրերս դրվեցաւ կոմսէնի Լուիս Բօլզի յիշատակին մի արձան: Կոմսէնի, որը վախճանվեցաւ 1883 թվին, իր կենդանութեան ժամանակ մեծ նուիրատուութիւններ էր անում յօգուտ բոլոր կալան գիտութիւնների առաջադիմութեան և մեռնելով կուսակց յօգուտ համալսարանական ստիպենդիաների 732,500 մարկի դրամաբար:

Նորբրուս փարիզում մի տարօրինակ ձիարշաւ տեղի ունեցաւ, բայց ոչ թէ ձիերով այլ էշերով:— Եւ ամբողջ փարիզում զանկեցաւ միտին 12 հաս էշ: Եթէ այդ տեսակ էշ արշաւ Թիֆլիսում ամբողջէր, Բրեքան էշեր կը զտնէին միւլ մօտ...:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄԻՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 15 յուլիսի: Երէկ երկուցիսն քաղաքականութեան սկսեցաւ հանդիսաւոր զանազանութիւն, աւետելով ռուսների միջոցութեան

900-ամակի հասնելը: Հսկումն կատարվեցաւ առանձին բարեհալութեամբ. մի և նոյն ժամանակ մայրաքաղաքը սկսեց շքեղ կերպով դարձալիլ: Կայսրից հանդիսի համար, մասնաւոր գեղեցիկ կերպով դարձալված են այն փողոցները, որոնցով պէտք է անցնէ թափօրը: Զուր օրհնելու համար պովիլիօնը շինված է—գիպակից: Ալեքսանդրեան կոթողի մօտ շինված են շքեղ դարձալված սպալատակ և հովանոց: Գաղաքային կրէդիտական ընկերութեան զանգեղանի պատերը, ուր պէտք է կայանայ սլավոնական բարեգործական ընկերութեան ժողովը, դարձալված են խաչմաններով: Զանգեղանի շինարարութիւնը, որոնց վրա նկարված են սլավոնական զանազան երկրների և քաղաքների նշանակները:—«Прав. Вѣстн.» լրագիրը հերքում է «Моск. Вѣд.» լրագրի հաղորդութիւնը բալտեան նահանգներում լուսնրական եկեղեցիների և մասնաւոր անձանց ձեռքում եղած պետական կառուածների մասին քննութիւն նշանակելու կարգադրութեան վերաբերմամբ: Երէկ իրկին անգամ քննվում էր բժշկապետ Գրեյ-պէյկերի և Ֆիլդշեր Երմօվի իր յայտնի գործը հիւանդին հիւանդանոցում չընդունելու մասին: Գատարանը վճեց երկուսին ևս չորս շաբաթով բանտը նստեցնել:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 15 յուլիսի: Երէկ կատարվեցաւ խեթոնեան ս. իշխան Վլադիմիրի անուան տաճարի ստորին մասի օծումը. այսօր այդ տաճարի մէջ պատարագ մատուցվեցաւ, իսկ պատարագի վերջը հոգեհանգիստ կատարվեցաւ այն ուղղափառ քրիստոնեաների համար, որոնք նոյաւտել են ուղղափառութեան տարածմանը:

ՍՏԱՆԳՈԼ, 15 յուլիսի: Երէկ, վաղ առաւօտեան, թագաւորը և թագաւորուհին գնացին հանդիպելու գերմանական կայսրին բաց ծովում: Խնքնակալները հանդիպումը շատ բարեկամական էր. ազգաբնակչութիւնը հիացմամբ ընդունեց կայսրին: Երկուցիսն հանդիսաւոր ճաշ կար, ուր ինքնակալները միմեանց կենացներ առաջարկեցին և ցանկութիւն յայտնեցին Գերմանիան Շվեդիայի հետ կապող բարեկամական կապերը ամրապնդելու մասին:

ԲԵԼԳՐԱՎ, 15 յուլիսի: Միտրօպօլիտը յայտնեց թագաւորին, որ ամիսը ապահարպանի գործում ներկայանում է միայն իբրեւ բողոք ներկայացնելու անուան և այդ պատճառով ամենից առաջ գործը պէտք է քննէ կոնսիտօրիան:

ՀՈՒՄ, 15 յուլիսի: Այստեղ ենթադրում են, որ Վիլհելմ կայսրի տեսակցութիւնը Ֆրանց-Յոլմպի կայսրի հետ կը կայանայ սկստեղծների վերջին, իսկ նրա տեսակցութիւնը Հոմբերտ թագաւորի հետ կը կայանայ մօտ հոկտեմբերի 10-ին:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 15 յուլիսի: Խառնական մայրեկեղեցուց թափօրը գնաց դէպի ս. իշխան Վլադիմիրի եկեղեցին: Զորքները Նիկիայի վրա, Ծովապետութեան շինութեան հանդէպ, և դրօշակներ օծումը կատարվեցաւ: Բարձրագոյն ներկայութեամբ: Սլավոնական բարեգործական ընկերութեան հանդիսաւոր նիստին նախագահում էր գերմալ Վիլհելմ, ձառեր խօսեցին՝ նախագահ Վիլհելմ և բժշկապետ Ժօրնի, քարտուղար Արիստով կարդաց և իշխան Վլադիմիրին նուիրված հիմնը, որ գրել է Սլոլէվիլի, երաժշտութիւն Գլապիլ:

ԿԻԵՎ, 15 յուլիսի: Այսօր, հանդիսին հաւաքված զորքերի մէջ պտտելու ժամանակ, յանկարծ վախճանվեցաւ կաթնածից Կիեվի գնեղաւոր-հասնապաւ Գրեյտէն:

ԿԻԵՎ, 15 յուլիսի: Այսօր Կիեվի բողոք եկեղեցիները մեծ թափօրով գնացին դէպի Գնէպր գետը, ուր կատարվեցաւ ջուր օրհնելու հանդէսը: Պատարագից յետոյ, որ մատուցւում էին երեք միտրօպօլիտները, 12 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ հոգեւորականութեան խմբի հետ միասին, թափօրը պատկերներով և խաչմաններով, դրօշակներով և եկեղեցական նշաններով զանազանութեամբ գնաց Սօֆիայի մայր եկեղեցու դէպի ս. իշխան Վլադիմիրի արձանը, իսկ արքեպիսկոպոսը, եկեղեցական կարող կատարելուց և ժողովրդին օրհնելուց յետոյ, թափօրը անցաւ Ալեքսանդրեան լեռնով, ուր միացան նրա հետ ճանապարհի վրա Կիեվի եկեղեցիների թափօրները և կանգ առան Գնէպրի արիքի վրա պատրաստված սուգանի մօտ, ոչ հեռու ս. Վլադիմիրի ստորին արձանից: Գաղաքը դարձալված էր դրօշակներով և ծաղիկայ պսակներով առաքելապատու իշխանի անուան օրհնակը էր բողոք հրապարակները, լեռների գաղաթները և

տների կտուրները: Գնէպր ծածկված էր բազմաթիւ հաւերով: Ժողովրդով լի 20 մեծ զոքնաւոր շրջապատել էին աւազանը: Զորքները վերջացնելուց և բազում տարիներ մաղթելուց յետոյ, բողոք եկեղեցիները զանազանութեան ժամանակ թնդանով ծագութիւն եղաւ: Նրանակը կատարելապէս համապատասխանում էր հանդիսին: Զորքերը կարող կանգնած էին այն փողոցների երկարութեամբ, որտեղով անցնում էր հանդիսաւոր թափօրը: Խրիստօօրհնատիւնկայա անունով եկեղեցու մօտ գտնված հրապարակի վրա մաղթանք կատարելուց յետոյ, հոգեւորականութիւնը, պատահաւորութեան իրար և բողոք հիւրերը հրաւիրեցան քաղաքային ճաշին, ուր միտրօպօլիտ Պլատօն, և ս. սինօդի օրէր-պրօկուրօրը ճառեր խօսեցին:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 17 յուլիսի: Երէկ, ռուսների միջոցութեան 900-ամակին, առաւօտեան 8 ժամին թափօր սկսվեցաւ Ալեքսանդրեան անուանված մայր եկեղեցուց: Հանդիսին մասնակցում էին Տալիկեան և Սիմօնիսօպօսեան եպիսկոպոսը, տեղական բողոք եկեղեցիների հոգեւորականութիւնը, քաղաքում բնակվող բողոք զորքերը զրօշակներով, քաղաքի ներկայացուցիչները, զանազան զարդերի աշակերտները և արհեստաւորների գլխաւորները: Թափօրը գնալով Եկատերինիսկայա փողոցով, անցաւ Նախիմովիկի պրօսպեկտը և Բոլշայա Մօրսկայա փողոցի մի մասը, իսկ այնտեղից գնաց այն ճանապարհով, որ տաճարում է դէպի Խեթոնեան վանքը: Խեթոնեան վանքի նոր տաճարում մաղթանք կատարվեց առաքելապատու իշխան Վլադիմիրի համար ջրօրհնութեամբ, ապա թափօրը կատարվեց վանքի շուրջը: Վանքի դռների մօտ թափօրին քաղաքից գիմաւորեցին վանահայր իր միաբաններով, Խեթոնի և Օրէսայի արքեպիսկոպոսը և ամբողջ հոգեւորականութիւնը: Վանքը մտնելուց յետոյ, թափօրին մասնակցող հովաւապետները այդ նպատակով նշանակված հոգեւորականութեան հետ միասին բաժանվեցան վանքի երեք տաճարներում ևս միաժամանակ պատարագ մատուցանելու համար: Պատարագը վերջացնելուց յետոյ կատարվեց մաղթանք և ջրօրհնք, որից յետոյ սկսեցին սրսկել օրհնած ջրով զօրքը, նրանց դրօշակները և ժողովուրդը: Ճաշից յետոյ, մայր եկեղեցու վերին, չօծված տաճարում կայացաւ ընթերցանութիւն ժողովրդի համար, պատգամաւորութիւնների ներկայացնելը և բրօշխները բաժանումը: Հասարակութեանը անվարձ տանում էին Սեւաստօպօլից Խեթոնեան երկու շոգնաւոր: Երեկոյեան Խեթոնեան լուսաւորութիւն կար Այսօր քաղաքը և նաև բողոք դարձալված են դրօշակներով իսկ երկուցիսն լուսաւորութիւն կը լինի և ժողովրդական զօրանքը բուլվարի վրա:

ՆԻԺՆԻ-ՆՈՎՈՐՈԴ, 17 յուլիսի: Երէկ, քաղաքի մայր եկեղեցուց և բողոք եկեղեցիներից դէպի Օկա գետը ջրօրհնքի համար թափօր կատարելուց յետոյ, կայացաւ երկրորդ փոքր թափօր տօնակալութեան դէպի Մակարելսկայա մատուռը: Այստեղ մաղթանք կատարեցին և տօնակալութեան զրօշակներ բարձրացրին:

ԿԻԵՎ, 17 յուլիսի: Այսօր Կիեվի բողոք եկեղեցիները մեծ թափօրով գնացին դէպի Գնէպր գետը, ուր կատարվեցաւ ջուր օրհնելու հանդէսը: Պատարագից յետոյ, որ մատուցւում էին երեք միտրօպօլիտները, 12 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ հոգեւորականութեան խմբի հետ միասին, թափօրը պատկերներով և խաչմաններով, դրօշակներով և եկեղեցական նշաններով զանազանութեամբ գնաց Սօֆիայի մայր եկեղեցու դէպի ս. իշխան Վլադիմիրի արձանը, իսկ արքեպիսկոպոսը, եկեղեցական կարող կատարելուց և ժողովրդին օրհնելուց յետոյ, թափօրը անցաւ Ալեքսանդրեան լեռնով, ուր միացան նրա հետ ճանապարհի վրա Կիեվի եկեղեցիների թափօրները և կանգ առան Գնէպրի արիքի վրա պատրաստված սուգանի մօտ, ոչ հեռու ս. Վլադիմիրի ստորին արձանից: Գաղաքը դարձալված էր դրօշակներով և ծաղիկայ պսակներով առաքելապատու իշխանի անուան օրհնակը էր բողոք հրապարակները, լեռների գաղաթները և

ՀՈՒՄ, 17 յուլիսի: Հոռոմի նահանգապետը պաշտօնապէս յայտարարում է Մասսովան իտալական երկրների հետ միացնելու մասին:

ԹԵԼԲՍ, 17 յուլիսի: Աստուրաղեան շրջանում բնակվող տրոպիկն-սամուրները զննարդված ապստամբութիւն արին: Ապստամբների գոհմբը կողպուեցին Աստուրաղի հարեան գիւղերը և սպառնում են քաղաքին: Շատ ժողովուրդ է սպանված: Աստուրաղի բնակիչները զինվեցին Շահին և Խորասանի նահանգապետից խնդրեցին օգնութիւն, որովհետեւ Աստուրաղի նահանգապետը չունի բաւարար միջոցներ սպառամբութիւնը ճնշելու համար: Աստուրաղում և պարսկական սահմանին մօտ գտնվող Ալ-Կալեում աղաքնակութիւնը սովից տանջվում է. առևտուրը կատարելապէս դադարել է և բողոք խանութները փակված են:

ԿԻԵՎ, 18 յուլիսի: Ռուսների միջոցութեան

900-ամեակի առթիւ լրացանքի կողմից տուած ճաշին ներկայ էին 1,000 հոգուց աւելի մարդիկ: Զանազան թեմերից, քաղաքներից և ընկերութիւններից կիւնի միտքագործի տնտեսով ուղարկած բացի բազմաթիւ աղբէրներից, ստացվեցան քաղաքում հարկերից աւելի չնորհաւորական հեռադիրներ, առանելապէս սլավոնական երկիրներից, բայց բոլոր հեռագիրները դեռ ևս կարգի չեն բերված: Սլավոնական բազմաթիւ հիւրերի հետ միասին, որոնց մասին հաղորդվեցաւ առաջուց, ճաշին ներկայ էին սլավոնների բանաստեղծ Սլեպոգոր-Պուրբան-Վանանսկի, որը առաջ կիւնիւն էր կիւնի-Մէֆոդեան տնտեսութեանը, Պալէ Մուրով, ծեր գլխուր և աղագետ Ամբրոս Պիէտր, սլովակեան «Народные Новины» լրագրի խմբագիր Դոկտոր Ֆրանցիսկ Բարվիչ: Զանազան տեղերից ստացվում են բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ ամենքից յարգված Ա. Բ. Գրէնտէնի մահուան առթիւ: Հանգուցեալի դագաղի վրա դրված են բազմաթիւ պատկեր զանազան հիւնարութիւնների և ընկերութիւնների կողմից, նոյնպէս և մի պսակ իւրաքանչիւր գլխի վրա: Դրանց, որի հրամանատարն էր Ալեքսանդր Բոմանովիչ վաթսուական թականներին: Ս. Վլադիմիր համալսարանի կողմից այսօր պսակ դրեց հանգուցեալի դագաղի վրա համալսարանի բէկ-տորը դէկանի հետ միասին: Թաղման օրը սպասում են զինուորական միջնաբերդի և նորին բարձրութիւն պրինց Ա. Պ. Օլէքսանդրովի գալուստը: Թաղումը կը կատարվի յուլիսի 19-ին «Ասկոլդ-վա-մոզիլա» անուանված գերեզմանոցում: Այսօր յունաց թագաւորը Պալլադիսի ժամանեց:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 18 յուլիսի: Զինուորական մի-նիստըրը դնաց կիւնի, իսկ ճանապարհների հաղորդակցութեան միջնաբերդ ճանապարհ ընկաւ դէպի Վարշավա: Վ.Է.Ն.Ն. 18 յուլիսի: Խարինսկի փոխ-գնդապետի սպանողները զինուորական դատաստանական քննութիւնն սկսվեցաւ: Դատի են ենթարկված 37 զինուորներ: Կ. ՊՈԼՆԱ, 18 յուլիսի: Որովհետեւ բողոքական կառավարութիւնը դրաւել է Բէլուսի-Վալարէ-լեան երկաթուղին, Թիւրքիան դրված դիւլոմա-տիական բողոք պէտք է ներկայացնէ: Թիւրքիան ենթարկում է, որ եթէ բողոքական կառավարութիւնը չի կանգնի օրինական ճանապարհի վը-րա, այն ժամանակ, մինչև բողոքական խնամի ընտրութիւնը, կը նշանակի մի յարմար անձն Ա-րևելեան-Բոսնիական կառավարելու համար: ԱՅՈՒՆ, 18 յուլիսի: Բուսական միասին տո-նեց Պիէտրուս Բուսնի միջնաբերդն 900-ամեա-կը: Ռուսաց «Заблуда» նաւը և յունական նաւա-տորմը դարձանված էին դրոշակներով: ՀՈՒՍՄ, 18 յուլիսի: Զը նայելով հոմէա-կան հողերականութեան առաջադրութիւնն-րին, Վ.Է.Ն.Ն. կայսրը վճռեց անպատճառ այցել-լութիւն անել Խաւրայի թագաւորին Հոմում, և ոչ թէ մի որ և է ուրիշ քաղաքում, բայց պա-պի անձնատիրութիւնը չը վերաւորելու համար, կայսրը առաջ կերթայ Վատիկան, իսկ յետոյ մի-այն կվերինաւ:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍՈՒՐԲ-ԽԱՉ քաղաքի հոգևոր միջնաբերդի համար պէտք է մի ՈՒՍՈՒՑԻՉ Բուսնի լեզուի: Պէտք է դաստիարակ միայն լեզուից տղայոց և օրիոր-դաց դպրոցի երկու բաժանմունքում: շաբաթական 24 դաս: Գրութիւնից 6 դաս: Մի խօսքով պէտք է հաշուել 24—30 դաս, տարեկան 400 ռուբլի ռոճիկով, առանց ոչնչի (այսինքն առանց ճանապարհածախսի, բնակարանի, վառելիքի և ծառայի): Յան-կացողները թող շուտով դիմեն վերոյիշեալ պայմաններով հոգաբարձութեանը:

1—3

ՂՈՒԲԱՑԻ հայոց երկրասեան դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ Բուսնի լեզուի և նոյն լեզուով աւանդելի առարկաների համար: Պայմաններ մասին թիֆլիսեանները դիմեն «Աղբիւր» խմբագրատունը: Խաչատուր ֆանանցին, իսկ Թիֆլիսից դուրս գտնվողները Ղուբայի դպրոցի հոգաբարձութեան, իրանց պայմաննե-րով: Յանկացողը պէտք է ունենայ ուսուցչութեան իրաւունք:

1—3

Կ Ա Պ Ա Լ Ո Վ

տրվում են ԵՐԵՒԱՆՈՒՄ գանձող «ԶԱՐԱՑԻ» և «ԶՈՒԼՅԻ» քարավանասերեր: Պայմանների մասին հարցնել Թիֆլիսում Գլխից փողոցի վրա գտնվող ՂԱՍԱՄԲԱ-ՐՈՎԻ մարզպետում և Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԵԱՆ ապահովութեան ընկերութեան գործակա-լութեան մէջ:

6—15

ՄՕԶԻՈՎԻ հայոց երկսեռ դպրոցներին հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի և առարկաների համար, շաբաթական 24—26 դասով, տարեկան 600 ռուբլի վարձա-տրութեամբ: Ուսուցիչը կը ստանայ ճանապարհածախս, սենեակ, ծառայ, վառելիք և լուսաւորութիւն: Պահանջվում է օրինաւոր վկայական:

Յանկացողները պէտք է դիմեն կամ անձամբ կամ նամակով Մօզգովի հայոց երկ-սեռ դպրոցների հոգաբարձութեան:

3—3

Հոգաբարձու Յով. ԳԱՆԶՈՒՄԵԱՆՅ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբորատորիայ փողոց, № 11)

Յանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար, անցնալ յունիս ամ-սում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԼԻՆԵՐ, թող բարեհա-ձնն դիմել կուրսերի հիմնողին, Ս. ՄԱՆՈՒԷԼԻԱՆԵՐԻՆ: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, և կովկասի ուսումնարանական շրջանի հո-գաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր առեստատներ:

Ընդունելութիւնները սկսվում են սեպտեմբերի 15-ից: Կուրսերի ծրագիրը և կա-նոնները կարելի է ստանալ ձրիապէս ԵՄԵՂԻՆ: Ծովանոցների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են Թիֆլիս, Կրե-дителю курсовъ С. П. Мануэльянцу.

4—5

(Ի. Շ.)

- 1) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑՈՒԼԻ պահանջելով վկայականով, որը կարողանայ դաս տալ ՈՒՍՈՒՑ ԼԵԶՈՒ և ՈՒՍՈՒՑՈՒՄԻՆԻՆ:
- 2) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ, պահանջելով վկայականով, որը կարողանայ դաս տալ հայոց լեզուով աւանդող բոլոր առարկաները: Մեր հասցեն՝ ԵՄ ԳՐ. ԴՍԵՏԵ. ԱՐՄՅԱՆՍԿՈՒ ԲԼԱԳՈՇԻՆՈՒ ՄԵՐՏ-ՏԱՐԿԵՍՅՈՒ ԵՐԻՃԻՃՈՒ.

2—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է հայոց լեզուի և թարգմանութեան դասեր տալ: Ներսիսեան դպ-րոցում աւարտած է և ՄԻ ՏԱՐԻ արդէն վարել է ուսուցչի պաշտօնը: Ցանկանում է ուսուցչութիւն անել դաւառական քաղաքներում կամ ձեռնտու պայմաններով գիւղերում:

1—3

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՑԻՆ ԶԻՐԻՆ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերթօնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ դեռեղում է Լօբկօ և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա-նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱՅԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՆԴԱՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ: Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառու-թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ԶԻՒԻՆԻ հաշակաւոր ՖԻՆՏԻՐ, որը միակ է, որ անդուլթեամբ մաքրում է ջրերը կապա-րից, կրից, կրկնից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և բիմիսկան գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Հնորեղով այն օ-ժանդակ միջոցներին, որ տալիս է դիտութիւնը անալիտիկական բիմիսկի ձևերում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէտերեան, մրգային և զաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼ-ԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԻՐԻՐ, ինչպէս օրինակ՝ ՎԻՅԻՆ, ԷՍԻՆ, ԿԱՐՍԵՐԱՅԻՆ, ՄԱՐԻՆԵՐԱՅԻՆ ջրերը, լու-ծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազոտողների տուած կա-նոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշա-կաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դե-րազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-նակ պարունակելով իրանց մէջ անխաթմա զաղերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա-խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներդրելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում աւել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-րութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ: Տարածախնութիւններից խոստովելու համար, խոստարարք խնդրում եմ իմ ջրերի գործածող-երին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

28—50 (b)

Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-ются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положение Турецкихъ Армянъ“, публич- лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oeko- nomische Lage der Armenien in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni über- setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить бро-шюры, благоволите прислать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (b)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մասերի փոխելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ծախվում է դեղատներում և դրոգիստների մօտ Եւրօպայի նշանաւոր քաղաքներում և Կայսրու-թեան բոլոր քաղաքներում: ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆԵՍ ցանկում է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մազիստոր Վ. ԿԱՐՊԻՍԿԻՆԻ մօտ, Էլեկտրոնայա փողոց, № 39. Գալմանիին մեծ արկղը արժէ վարչական 50 կ., փոքրը 30 կոպ.

ՊԵՏԻ Ե ԶԴՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փո-շու գործածութեան բացատրութիւնը և ֆարմիի ցուցանանդիսի մեղաները:

8—10 (b)

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆԻ

„ՃԱԿԱՍԻ ԳՐՈՒՄԺԲԸ ԶԷ ԶԵԶՎԵԼ“

ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ

Գինը 40 կոպէկ

Գիմը. Шума, Аршаку Туманяну.

4—5

1000 ՐՈՒՐԼԻ ՈՒԶՈՒՄ ԵՄ ՏՈԿՈՍՈՎ

Հասցէն թողնել „Մշակի“ խմբագրատանը:

2—4

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱԻՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԳԻՆԱՑՈՒ-ԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամե-րիկայի բոլոր դիւաւոր նաւահանգիստների մէջ: Շտաբնաւորը Բաթումից դուրս են գա-լիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1,500 տոննա ունեցող շտաբնաւորը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս:

Բոլոր տեղեկութիւնները մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԵՐՈՒՄԻՆԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ—ԳՕՂՈՎԻՆՍԿԻ պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլիի տանը:

8—40

Խոնարհարար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բարեհաճել էին իմ թարգմանած՝

„ԲՆԱԻՌՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ“

Գրքի համար (հեղ. պրօֆէսոր Ա. Գաբրիէլի) բաժանորդներ գտնելու ներդրելով յանձն առ-նել, բարեհաճեն ուղարկել բաժանորդութիւնը և դրամը, որպէս զի կարողանամ ձեռի ուղիւ տպա-գրել օրինակների քանակութիւնը և ժամանակին դեռեղել յարգելի բաժանորդաց աղգանունները: Գրքը լոյս կը տեսնի առաջիկայ սեպտեմբերին: Հասցէն՝ Թիֆլիս, Կրեմլոյ Արմ. Դուք. Շեմ. Ներսիսյան, Գրիգորի Մախոյադանյու.

2—3